ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2521-Ա « 15 » մայիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի Հ.723-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1.Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 23-ի «Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ Երևան քաղաքի բյուջեից ֆինանսավորման գործընթացը կանոնակարգելու, վարչատնտեսական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի նվազագույն հաստիքային միավորները և վարձատրության խմբերը հաստատելու մասին» N 723-Ա որոշման N 1 հավելվածի 3-րդ կետում՝ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1) Հաստատության անձնակազմի ամսական աշխատավարձի ֆոնդը (ԱԱՖ), որը ներառում է օրենսդրությամբ սահմանված հարկերը և այլ պարտադիր պահումները, հաշվարկվում է Կանոնակարգի N 2 հավելվածով սահմանված վարչատնտեսական, մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների վարձատրության խմբերի մեկ դրույքի համար բազային աշխատավարձի նկատմամբ կիրառելով հետևյալ գործակիցները՝

Վարձատրության խումբը	Կիրառվող գործակիցը
1	1.32
2	1.38
3	1.50
4	1.67
5	1.69
6	1.86
7	1.90
8	2.40

».

2) 3-րդ ենթակետում՝ «2.08» թիվը փոխարինել «2.50» թվով, իսկ «2.16» թիվը՝ «2.60» թվով:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2026 թվականի մայիսի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246